ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՐՇԱԼ Ա. ԽԱՆՓԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԵԿԱՄՅԱ ՍՊԱՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեկամյա սպայական դասընթացները կազմակերպվում են ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում:

Դասընթացներն սկսվելու են 2021թ. սեպտեմբերի 1-ից:

Դասընթացներին կարող են մասնակցել բուհում ուսանող՝ պարտադիր զինվորական ծառայության 2021թ. ամառային զորակոչին ենթակա, ինչպես նաև ավարտական կուրսի իգական սեռի քաղաքացիները:

Դասընթացները կազմակերպվելու են հետևյալ կրթական ծրագրերով.

1. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝

- մոտոհրաձգային ստորաբաժանումների կառավարում,
- հրետանային ստորաբաժանումների կառավարում:

2. ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում՝

- Ռազմական կապի տեխնիկա,
- ՀՕՊ ռադիոլոկացիոն համալիրներ,
- ՀՕՊ միջին և փոքր հեռահարության զենիթային համալիրներ,
- ՀՕՊ մոտակա գործողության զենիթային համալիրներ:

Դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած՝ 2021թ. ամառային զորակոչին ենթակա քաղաքացիները պետք է դիմեն ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին, իսկ իգական սեռի քաղաքացիները՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատություններ:

Զորակոչիկները 2021թ. ամառային զորակոչի ընթացքում սահմանված կարգով կզորակոչվեն ՀՀ զինված ուժեր և ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների միջոցով կներկայացվեն հանրապետական հավաքակայան: Առողջական վիճակի վերաբերյալ դրական եզրակացության դեպքում համապատասխան մասնագետները հարցազրույցի միջոցով կստուգեն նրանց մասնագիտական գիտելիքները: Դրական որոշման դեպքում նրանք կուղարկվեն վերոնշյալ՝ համապատասխան Համալսարաններ:

Իգական սեռի քաղաքացիները մինչև 2021թ. հուլիսի 25-ը պետք է ներկայանան համապատասխան ՌՈՒՀ-եր՝ բժշկական հետազոտություն անցնելու, ինչպես նաև մասնագիտական գիտելիքներն ստուգելու նպատակով հարցազրույցի մասնակցելու համար: Դրական որոշման դեպքում իրենց դիմումի համաձայն նրանք կընդունվեն պայմանագրային զինվորական ծառայության՝ կնքելով «Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին» պայմանագիր:

Համալսարաններում զորակոչիկների և իգական սեռի քաղաքացիների հետ կանցկացվի «Նորակոչիկների պատրաստության ծրագրով» դասընթաց, որի ավարտից հետո կկայանա զինվորական երդման հանդիսավոր արարողությունը: Նրանց հետ կկնքվի «Սպայական դասընթացին մասնակցելու մասին» պայմանագիր:

Դասընթացներին մասնակցելու ժամանակահատվածում նրանք համարվելու են համալսարանների կուրսանտներ (այսուհետև՝ Զինծառայող):

Իր զեկուցագրի համաձայն ուսումնառությունից հրաժարվելու, կամ անբավարար առաջադիմության, կամ անկարգապահության պատճառով դասընթացից հեռացվելու դեպքում դասընթացում ուսումնառության ժամանակահատվածը չի հաշվարկվում Զինծառայողների պարտադիր զինվորական ծառայության ժամկետում և վերջիններս՝ բացառությամբ իգական սեռի իգական սեռի քաղաքացիների, սահմանված կարգով ուղարկվում են շարունակելու հետագա պարտադիր զինվորական ծառայությունը:

Դասընթացն ավարտելուց հետո Պաշտպանության նախարարության հետ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքելուց կամ հետուսումնական երկու տարվա ընթացքում իր զեկուցագրի համաձայն պայմա-

նագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքերում ևս դասընթացին մասնակցության և պայմանագրային զինվորական ծառայության ժամանակահատվածը չի հաշվարկվում Զինծառայողների՝ բացառությամբ իգական սեռի քաղաքացիների, պարտադիր զինվորական ծառայության ժամկետում:

Ուսումնառության և հետուսումնական ծառայության ընթացքում Զինծառայողները կօգտվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական բոլոր արտոնություններից և դրամական բավարարումներից:

Ուսումնառությունն ավարտելուց հետո զինծառայողներին կշնորհվի առաջին սպայական «լեյտենանտ» զինվորական կոչում և վիճակահանության կարգով նրանք կնշանակվեն դասակի հրամանատարի պաշտոններում՝ երկու տարի ժամկետով զինծառայություն անցնելու համար:

Վիճակահանության ընթացքում արտոնություն կտրվի բուհը և ռուհը գերազանցությամբ ավարտածներին, զոհված և պատերազմի ժամանակ վիրավորված ու հետագայում ստացած վերքերից մահացած ազատամարտիկների զավակներին:

Լրացուցիչ հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (010)29-45-84, (094)19-90-60, (098)77-18-03: